Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ԴԵՄ ՇԱՐԺՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

80-ական թվականներին Իրանում ծավալվում է հակագաղութարարական և հակաֆեոդալական մի շարժում, որը պաշտպանելով ժողովրդի տնտեսական և քաղաքական շահերը, հետևողականորեն պայքարում էր ֆեոդալական իշխանության և նրա դաղութարար հովանավորողների դեմ։

Պետք է նշել, որ այդ մեծածավալ շարժումը Նասր-էդ-Դին շահի թագավորության ժամանակաշրջանում բարիների շարժումից հետո ամենանշանավորն էր, որի ընթացքում Իրանի ժողովուրդը գիտակցեց համախմբվածության ուժը։

Նասր-էդ-Դին շահը 1889 թ. երկրորդ անգամ ճամփորդություն է կատարում դեպի Եվրոպա։

Անգլիական մոնոպոլիաները ձգտում էին՝ օգտագործելով շահի այս ուղևորությունը, տնտեսական տարբեր կոնցեսիաներ ձեռք բերել Իրանում։

* * *

XIX դ. կեսերից Իրանը օտարերկրացիներին մի շարք կոնցեսիաներ է տալիս։ Դաղութարար պետությունների ձեռք բերած կոնցեսիաները, ստորագրած պայմանագրերը, տված փոխառությունները, մասնավոր կապիտալի ներդրումները և առևտրի մոնոպոլիան սկիզբ են դնում Իրանի տնտեսական և քաղաքական ստրկացմանը։

Բազմաթիվ կոնցեսիաներից մեկն էր ծխախոտի կոնցեսիան, որ 1890 թ. տրվեց անգլիական դաղութարարներին։

Ծխախոտի կոնցեսիայի ձեռք բերման շուրջը բանակցություններ վարելու գործը Անգլիայում հանձնարարվեց Ջերայլդ Թալբո-

թին, որը Անգլիայի ֆինիստրների նախագահ Լորդ Սոլզբերիի խորհրդատուներից էր։ Տեղյակ լինելով Ամին էս-Սոլթանի կաշառակերությանը, նա բանակցությունների ընթացքում Մեծ վեզիրին առաջարկություններ արեց և խոստումներ տվեց։ Ամին էս-Սոլթանը իր հերթին այդ հարցի շուրջ զեկուցեց շահին, պարզաբանեց այդ գործարքի շահավետությունն ու առավելությունները և այն ներկայացրեց որպես «գտնված գանձ»։

«Այսպիսի ոխակալ, նսամոլ, շվայտ և ապիկար թագավորների և անարժան սալատականների օրոք պարզ է, թե երկրի վիճակը ուր կարող էր հասնել»[2],—գրում է Հասան Հալաջը։

Ջնայած ծխախոտի կոնցեսիոնները մեկ անձնավորություն էր, բայց Լոնդոնում կազմվեց մի ընկերություն՝ 650,000 ֆունտ ստեռլինգ կապիտալով[3]։ Կոնցեսիոն իրավունքներով հիմնադրված այդ ընկերությունը պետք է կոչվեր «Իրանի կայսերական ծխախոտի կորպորացիա»։

Թալբոթը 1890 թ. գարնան սկզբներին գալիս է Թեհրան։ Շահը նախապես գիտեր, որ պայմանագրի ստորագրության համար կոնցեսիոները նրան 25,000 լիրա է նվիրելու[4]։ «Շահը,—գրում է Մալեքզադեն,—որն իր էությամբ այնքան գծուծ էր, որ մեկ թումանից էլ չէր հրաժարվի, 25,000 լիրայի անունը լսելուն պես գլուխը պտտվեց և անմիջապես ստորագրեց պայմանագիրը»[5]։

Պահպանվել է մի փաստաթուղթ, որը հաստատում է Իրանի կառավարող շրջանների կաշառակերությունը և դավաճանությունը[6]. այդ Թալբոթի նամակն է Ամին էս-Սոլթանին, որը գրել է մինչև Իրան ժամանելը։ Ահա այն. «Ես՝ մայոր Թալբոթս, պարտավորվում եմ մեծապատիվ ազնվական Ամին էս-Սոլթանին և Նորին վեհափառություն Իրանի շահին տալ 40.000 ստեռլինգ։ Այս գումարից 10.000 ստեռլինգը կվճարվի «Ռեժի» կոնցեսիոն պայմանագրի փոխանակման օրը, 10.000 ստեռլինգը կոնցեսիայի գործունեության

---

1 Նույն տեղում, էջ 25։

2 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران، تهران ۱۳۸۷ قمری، ص ۱۳

3 احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران ۱۳۴۰، ص ۱۵

4 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۲۷

5 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۷

6 Իբրահիմ Թեյմուրիի հաղորդմամբ ծխախոտի ընկերությունը մոտ չորս-հարյուր հազար թուման կաշառք էր տվել Ամին էս-Սոլթանին, փոխարքա Քամրան Միրզային և այլ ազդեցիկ պալատականների։

ծավալելու առաջին օրը, իսկ 20.000 ստեռլինգ մնացորդ գումարը պայմանագրի իրագործումից երկու ամիս անց։

Փարիզ, 1889 թ.»[7]

1890 թ. մարտի 20-ին Թեհրանում վավերացվում է Թալբոթ անգլիական ընկերության և Իրանի միջև հիսուն տարի ժամկետով կնքված պայմանագիրը։ Այն բաղկացած էր տասնհինգ գլուխներից։ Ծխախոտի ընկերությունը պարտավորվում էր Իրանի կառավարությանը վճարել տարեկան 15.000 ֆունտ-ստեռլինգ, եկամուտների մեկ քառորդը և կապիտալի հինգ տոկոսի դիվիդենտը։ Պայմանագրի երկրորդ կետի համաձայն ամբողջ Իրանի ծխախոտի մշակման, թե՛ ներքին և թե՛ արտաքին վաճառքի, ծխախոտի ցանքերի վրա հսկողության, ինչպես նաև ծխախոտի արժեքի որոշման իրավունքը վերապահվում էր ընկերությանը։

Եթե իրանական հողագործը մինչ այդ իրավունք ուներ իր բերքը վաճառել ցանկացած մարդուն, իր ցանկացած գնով, նույնիսկ նախքան բերքը հանձնելը, նրա արժեքը գնորդից ստանալու պայմանով, այժմ նա իր բերքը կարող էր վաճառել միայն ընկերությանը, այն էլ վերջինիս սահմանած գնով։

Իմպերիալիզմի հարցերը ուսումնասիրելիս, Տ. Եգեռի «Պարսկաստանը և Պարսկաստանի հարցը» աշխատության մեջ տրված գնահատականը ծխախոտի սույն պայմանագրի անհավասար գրոփողական բնույթի մասին գրավում է Վ. Ի. Լենինի ուշադրությունը։ Հենվելով Եգեռի այն վկայության վրա, որ 13 միլիոն մարկ ունեցող ընկերությունը այդ կոնցեսիայի շնորհիվ 7½ միլիոն զուտ շահ պետք է ստանար, Վ. Ի. Լենինը լուսանցքում, որպես գաղութատիրական գիշատիչ բնույթի պայմանագրի նմուշ, նշել է՝ «Լավ օրինակ» և դիմացը դրել է երկու բացականչական նշան[8]։

Ծխախոտի ընկերությունը անմիջապես գործի անցնելով, իր ճյուղերը տարածեց ամբողջ Իրանով մեկ։

Ծխախոտի ընկերությունը, երկրի իշխանությունների տեղեկությամբ, մի հրաման է հրատարակում, որով այնուհետև ոչ ոք իրավունք չուներ ծխախոտի բերքը ընկերությունից բացի մեկ ուրիշին վաճառել, իսկ անձնական օգտագործման համար կես մա-

---

7 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۱۷۷

8 *В. И. Ленин*, Тетради по империализму, Полн. собр. соч., т. 28, стр. 705.

նից՝ ավելի ծխախոտ դնել չէր թույլատրվում։ Խախտողներին խիստ պատիժ էր սահմանվում։

Երբ հասնում է բերքի գնման ժամանակը, ծխախոտի ընկերության ներկայացուցիչների կողմից վարձված պարսիկ պաշտոնյաների և գյուղացիների միջև ծխախոտի գնի շուրջը կատաղի բախումներ և վիճաբանություններ են ծագում։

Պայմանագրի վեցերորդ կետի համաձայն բերքը պետք է գընվեր կանխիկ դրամով։ Կոնցեսիայի գործակալները դիմում են այսպիսի պարսավելի քայլերի. բերքը տիրոջ մոտ արգելքի տակ էին պահում և հողագործին կամ առևտրականին անելանելի դրության մեջ դնելով, վերջ ի վերջո, իրենց թելադրած գնով վերցնում էին նրանից։

Բնակչության մեջ չափազանց գաղտնի և աննշան ծավալով կատարվող ծխախոտի առևտուրը լրիվ վերացնելու նպատակով, 1891 թ. դեկտեմբերի 9-ին ընկերությունը մի այլ հրաման է արձակում, ըստ որի Իրանում ծխախոտի առևտուրը բացառապես ծխախոտի ընկերությանն էր վերապահվում։ Ծխախոտի գործով զբաղվել ցանկացողները պետք է այդ ընկերությունից գրավոր թույլտվություն ունենային և պահպանեին նրա կանոնադրությունը։ Այդ նպատակով ընկերության կողմից պատրաստվում են քառասուն հազար արտոնագրեր, որոնք մեկ տարի ժամկետով և մեկ թուման արժեքով վաճառվում էին ցանկացողներին։

Ընկերությունը Իրանի տարբեր ծայրամասերից հավաքած ծխախոտը, հատուկ նշաններով կնքված, մեկ չարաք* և կես ման քաշ ունեցող քսակներով վաճառքի է հանում։

Ընկերության այս և մյուս ձեռնարկումները ժողովրդի մեջ ահ ու սարսափ են առաջացնում և ամենուրեք քննարկման առարկա դառնում։

Ուշադրության է արժանի մի անվանի իսֆահանցու նամակը ուղղված իր մտերիմներից մեկին, որտեղ հանգամանորեն նկարագրված է Իրանի հողագործի ընչազուրկ, ողբալի կյանքը, դիմակազերծ է անում «բարեխիղճ եվրոպացուն» և բացահայտում նրա հարստահարիչ քաղաքականության էությունը[10]։

---

* Ման—կշռի չափ, որը Իրանի առանձին վայրերում տարբեր է, այսպես, Թավրիզի ման՝ մոտ 3 կգ, շահի ման՝ մոտ 6 կգ, Ռեյի ման՝ մոտ 12 կգ։ Տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի Թավրիզի մանը։

9 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۴۴

* Չարաք—կշռի չափ, հավասար է մոտավորապես 750 գրամի։

10 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۴۵–۴۶

Իրանի գյուղացիության ծանր վիճակը չէր կարող իրեն զգացնել շտալ։ Ծխախոտի կոնցեսիան ավելի սրեց երկրում տիրող ֆեոդալական հակասությունները և հասցրեց մեծածավալ շարժման։

Իրանում ծխախոտի կոնցեսիայի պայմանագրի դեմ պայքարի են դուրս գալիս հասարակության լայն շրջանները՝ ազգային բուրժուազիայի մի մասը, գյուղացիությունը, որը կազմում էր Իրանի ամբողջ բնակչության մեծամասնությունը և տառապում էր ինչպես ներքին՝ ֆեոդալական բռնապետական կարգերի, այնպես էլ օտարերկրյա գաղութարարների շահագործման ծանր լծի տակ, մանր առևտրականները և քաղաքային բնակչության մի մասը, ստորին հոգևորականությունը, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականության այն մասը, որը տուժում էր ստեղծված դրությունից։

Հետաքրքիր է կանգ առնել պանիսլամիզմի հիմնադիր Սեյիդ Ջամալ-էդ-Դին Աֆղանիի նշված պայմանագրի դեմ ծավալած գործունեության վրա։

Երբ Իրանում սկսվում է ծխախոտի կոնցեսիայի դեմ համաժողովրդական շարժումը, Սեյիդ Ջամալ-էդ-Դինը Բասրա քաղաքից Հաջի Սեյիդ Ալի Աքբար ֆալ Ասիրիի միջոցով, որը նույնպես Շիրազ քաղաքում ծխախոտի կոնցեսիայի դեմ պայքարելու համար իշխանությունների կողմից աքսորված էր, մի նամակ է ուղարկում Սամարայի* մոջթեհիդ Հաջի Միրզա Հասան Շիրազիին, որտեղ նկարագրում է պարսիկ ժողովրդի ծանր վիճակը, պարզաբանում է ծխախոտի կոնցեսիայի քայքայիչ հետևանքները, սաստիկ քննադատության է ենթարկում Իրանի պետական ղեկավարման մեթոդները, խոսում է եվրոպացիների կողմից կատարվող կողոպուտի և ժողովրդի սնանկացման պատճառների մասին։ Նա այդ նամակով համոզում և անգամ պարտադրում է Միրզա Շիրազիին, որպեսզի այդպիսի պատասխանատու պահին, երբ երկիրը վաճառվում է օտարերկրացիներին, նա տիրություն անի Իրանի թշվառ ժողովրդին և որպես շիաների մեծ առաջնորդ բանադրանքի ենթարկի այդ կոնցեսիան։

«...Այս ամբողջ դժբախտությունը,—գրում է նամակում,—որ պատել է պարսից ժողովրդին, այն չարիքները, որոնք առիթ են հանդիսացել, որպեսզի օտարերկրացիները տիրանան իսլամական երկրին և ոտնձգություններ կատարեն մուսուլմանների իրավունք-

---

* Սամարա—շիաների սուրբ քաղաքը, որը գտնվում է Իրաքում։

ների վրա, այդ բոլորը ինչպե՞ս կարող է շաղդել քեզ վրա... Դու մեծ պատասխանատվություն ես կրում ժողովրդի ճակատագրի համար... Դու ես հանդիսանում շիաների առաջնորդը, բացի քեզնից ոչ ոք չի կարողանա ժողովրդին փրկել։ Եթե արդարության համար բմբոստանաս, բոլորը համախմբված քեզ կպաշտպանեն...

Իրանի թագավորը անսկզբունք և ազգադավ է, տկարացել է նրա միտքը, նա դարձել է դաժան, ինքն այլևս անկարող է երկիրը ղեկավարել և ժողովրդի շահերը պաշտպանել։ Այդ պատճառով երկրի ղեկը հանձնել է մի պիղծ մարդու (նկատի ունի Ամին էս-Սոլթանին—Հ. Փ.)։ Նա բարեկիրթ մարդկանց հետ դաժանությամբ է վարվում և ամբողջ երկիրը վաճառում է եվրոպացիներին»։— Այնուհետև Սեյիդ Ջամալ-էդ-Դինը թվարկում է օտարերկրացիներին տրված բազմաթիվ կոնցեսիաները, դատապարտելով դրանք, և նամակը ավարտում է հետևյալ բառերով. «...Ինչպե՞ս կարելի է հանդուրժել, որ մի պիղծ ավազակ իսլամի երկիրը այդպիսի էժան գնով վաճառքի հանի...»[11]։

Կարևոր դեր էին խաղում այդ ժամանակ լայն տարածում գտած թռուցիկները, որոնց նշանակության վերաբերյալ 1896 թ. «Ֆրանկֆուրտեր ցայտունդ» թերթը այսպես է գրել. «Երեք տարի առաջ Նասեր էդ-Դին շահի և արքայազների սենյակներում թղթեր գտան, որոնց մեջ պահանջվում էր Իրանում նոր բարեփոխումներ անցկացնել։ Միաժամանակ դրանց մեջ գրված էր. «Եթե այս թուղթը դուք ձեր սենյակում եք գտնում, ապա համոզված եղեք, որ նրանց հեղինակները մուտք ունեն պալատ։ Եթե նոր բարեփոխումներ չանցկացնեք, ապա ձեր ոչնչացումը մեզ համար շատ դյուրին է։ Շահը կարգադրեց հարցաքննություն կատարել։ Պարզվեց, որ հանցավորները՝ տասը հոգի, Ջամալ էդ-Դինի հետևորդներից էին, այդ թվում Միրզա Ռեզա Քերմանին»[12]։

Վերջինս ծխախոտի կոնցեսիայի դեմ ծավալած իր գործունեության պատճառով ձերբակալվեց և աքսորվեց Ղազվին, որտեղ չորս տարի ու չորս ամիս բանտարկված մնաց։

Նասեր էդ-Դին շահը սպանվեց Շահ Աբդուլ Ազիմում 1896 թ. մայիսի 1-ին։ «Այդ սպանությունը,—գրում է Բրաունը,—նույնպես անուղղակիորեն այդ չարաբաստիկ կոնցեսիայի արդյունքն էր.

---

11 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰، ص. ۵۳—۵۸

12 خان ملك ساسانی، سیاستگران دوره قاجار، تهران، ۱۹۳۰، ص. ۲۱۲

որի դեմ պայքարելու համար Միրզա Մոհամմեդ Ռեզա Քերմանին որոշեց վրիժառու լինել»[13]։

Միրզա Ռեզա Քերմանին օգոստոսի 10-ի խաչաձև հարցաքննության ժամանակ խոստովանեց, որ ծխախոտի կոնցեսիայի դեմ շարժման ժամանակաշրջանում ինքն է եղել հետևյալ թռուցիկի հեղինակը.

«Ո՜հ հավատացյալներ, ո՜հ մուսուլմաններ, ծխախոտի կոնցեսիան գնաց մեր ձեռքից։ Քարուն գետը գնաց, շաքարի արտադրությունը գնաց. Ահվազի ճանապարհը գնաց։ Եկավ բանկը և տրամվայը, երկիրը ընկավ օտարերկրացիների ձեռքը։ Շահը կարևորություն չի տալիս մեր շահերին։ Ուրեմն վերցնենք գործը մեր սեփական ձեռքը։»[14]

* * *

Ելնելով պայմանագրի տված իրավունքներից, անգլիացիները սփռվեցին Իրանով մեկ և հաղթանակած պետության նման, երկրի բոլոր ծայրամասերն ուղարկեցին վերակացուներ, բոլոր վայրերում վարձեցին հեծյալներ, ժամանակակից զենքերով զինելով նրանց։[15]

Ֆարս նահանգը, որպես Իրանի ծխախոտի կենտրոն, առաջին հերթին գրավում է «Ռեժի» ընկերության ուշադրությունը։

Մի խումբ պարսիկ վարձակալներ, մի անգլիացու ղեկավարությամբ, մեկնում են Շիրազ։ Այդ խումբը ուներ Ամին էս-Սուլթանի հանձնարարական նամակը՝ ուղղված Ֆարսի նահանգապետ արքայազն Մոթամեդ օլ-Դովլեին, որով կարգադրվում էր ամենուրեք օժանդակել անգլիացիներին և արժանավայել ընդունելություն ցույց տալ։

Աղբյուրները վկայում են, որ Ֆարս նահանգի վաճառականները լայն գործունեություն էին ծավալել Շիրազ քաղաքի բնակչության մեջ՝ ծխախոտի կոնցեսիայի դեմ և պարզաբանել նրա կողոպտիչ բնույթը։

1891 թ. ապրիլ ամսին, երբ անգլիական «Ռեժի» ընկերության աշխատակիցները մոտենում են Շիրազ քաղաքի արվարձաններին, քաղաքի բնակչության մեծամասնությունը, վաճառականու-

---

[13] *E. Browne*, A. Narrative of Recent Events in Persia, London, 1909, p. 7.

[14] *М. Павлович* и *С. Иранский*, Персия в борьбе за независимость, М., 1925, стр. 105.

[15] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۷

թյան դրդմամբ, փակում է շուկան ու խանութները և համախմբվում քաղաքի «Վաքիլ» մզկիթում։[16]

Ոմն Ֆալե Ասիրի բարձրանում է ամբիոն, կապալի տակից հանում է թուրը և հայտարարում. «Այսօր սրբազան պատերազմ է։ Ես ունեմ մի թուր և երկու կաթիլ արյուն։ Այն օտարերկրացին, որը ծխախոտի մենաշնորհի հարցով Շիրազ կմտնի, ես նրա փորը կպատռեմ այս թրով»[17]։

Երբ ընկերության ներկայացուցիչները տեղյակ են դառնում այդ իրադարձությանը, մնում են քաղաքի արվարձաններում և չեն համարձակվում մտնել քաղաք։ Ստեղծված դրության մասին հեռագրում են Թեհրան՝ անգլիական դեսպանատուն[18]։

Այդ իրադրության մասին Թեհրան է հեռագրում նաև Ֆարսի նահանգապետը[19]։

Անկասկած այս դեպքերը Թեհրանում զգաստացրին ընկերության վարչությանը, ինչպես նաև Անգլիայի նշանակած նոր դեսպան Լասելին։ Թեհրանում Անգլիայի դեսպանը ընկերության ներկայացուցչի հետ ներկայանում են Ամին էս-Սոլթանին և պահանջում անհապաղ լուրջ միջոցներ ձեռնարկել՝ ժողովրդի ըմբոստության ուժեղացումը կանխելու համար։

Ֆարս նահանգում կարգ ու կանոն հաստատելու գործը հանձնարարվում է Ղավամ օլ-Մոլքին։ Վերջինս զենքի ուժով ժամանակավորապես խափանում է ժողովրդի ապստամբությունը Շիրազ քաղաքում։ Ընկերության գործակալների որոշումը՝ փոքր զիջումներով մեղմացնել ապստամբների դիմադրությունը և որոշ արտոնություններ տալ ծխախոտագործներին, սպարդյուն եղավ[20]։

Կենտրոնից ստացված հրահանգով ձերբակալվում և արաբական Իրաք է աքսորվում շարժման ղեկավարներից Սեյիդ Ալի Աքբարը[21]։

Հետագայում Բասրա քաղաքում նա հանդիպում է ունենում Սեյիդ Ջամալ էս-Դինի հետ։ Վերջինս առիթից օգտվելով, բողոքի մի նամակ է գրում Սամարա՝ շիաների առաջնորդին և Սեյիդ Ալի Աքբարի հետ ուղարկում։

---

16 Նույն տեղում, էջ 69։

17 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۸

18 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۶۹

19 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۸

20 ابراهیم تیموری- قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۶۹—۷۰

21 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۸

Սեյիդ Ալի Աքբարի ձերբակալումը Ղավամ օլ-Մոլքի մարդկանց կողմից Շիրազի վաճառականներին առիթ է տալիս պայքարի ավելի լայն գործունեություն ծավալելու։ Շիրազի բնակչությունը ոտքի է ելնում, տեղի է ունենում բախում, որի ընթացքում երկու կողմերն էլ մեծ քանակությամբ զոհեր են տալիս[22]։

Շիրազի իրադարձությունները արձագանք են գտնում Թեհրանում, որտեղ անստորագիր սպառնալից նամակները թափանցում են անգամ շահի հարեմը[23]։

Այսպիսով, Շիրազի բնակչության պայքարը կարելի է համարել այն համաժողովրդական շարժման սկիզբը, որը հետագայում ընդգրկեց Իրանի տարբեր նահանգներն ու քաղաքները։

Շիրազ, Քաշան, Իսֆահան և այլ քաղաքների ծխախոտի արտադրանքի արտահանումը հատկապես Օսմանյան կայսրություն, կատարում էին Ադրբեջանի վաճառականները։ Ուստի Ադրբեջանի առևտրականները նույնպես տուժում էին ծխախոտի կոնցեսիայից, որի պատճառով նրանք ևս միացան համաժողովրդական շարժմանը։

Ծխախոտի ընկերության գործակալները անկարող եղան մուտք գործել Թավրիզ։ Այստեղ ընկերության պլակատները փոխարինվում են հեղափոխական թռուցիկներով[24], իսկ քաղաքում գտնվող՝ ընկերության գործակալներին սպառնում են մահով։

Այդ իրադարձություններից սարսափած Ամիր Նիզամը իր ընտանիքը ուղարկում է Բասմինջ՝ ռուսական հյուպատոսի ամառանոցը[25]։

Թավրիզի բնակչությունը բողոքի հեռագրեր է ուղարկում Թեհրան և իր վճռականությունը հայտնում իր իրավունքներն ուժով պաշտպանելու համար[26]։

Անելանելի դրությունը ստիպում է Ամին էս-Սոլթանին Անգլիայի դեսպանի հետ երկար խորհրդակցություններ վարել։ Շահը Մոշիր էդ-Դոլեին ուղարկում է ռուսաց լիազորի մոտ, որպեսզի վերջինս միջամտի Թավրիզի գործերին[27]։

---

22 Նույն տեղում։

23 *Feuvrier*, Trois ans a la cour de la Perse, Paris, p. 267—268.

24 *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909, Cambridge, 1910, p. 55.

25 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۱۴

26 *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909, Cambridge, 1910, p. 55,

27 *Feuvrier*, Trois... (*1891 թ. օգոստոսի 21-ի հաղորդումը, էջ 311։*)

Հավաքվելով թագաժառանգի պալատի առջև, Թավրիզի բնակչությունը պահանջում է կոնցեսիայի վերացումը[28]։

Ժողովրդական մասսաների շարժումից երկյուղած՝ պալատում որոշում են անվանի պետական գործիչներից մեկին ուղարկել Թավրիզ, որպեսզի նա ժողովրդին պարզաբանի այդ կոնցեսիայի շահավետությունը, միաժամանակ խռովություն ու տարաձայնություն սերմանի տեղի բնակչության տարբեր խավերի շարքերում։ Ինչպես Թելֆուրին է գրում, պետք էր «ջուրը այնպես պղտորել, որ ձուկ որսալը կենտրոնական իշխանության խարդախ որսորդների համար հեշտ լիներ»։ Այդ գործի իրականացումը հանձնարարվում է Ամին Հուզուրին։ Նրա մուտքը Թավրիզ, սակայն, անհնար է դառնում՝ մոտ քսան հազարի հասնող զինված բնակչության սպառնալիքի հետևանքով, մինչև որ թագաժառանգը ստիպված անձամբ մեկնում է քաղաքից դուրս և Ամին Հուզուրին իր անձնական կառքով ծածուկ բերում քաղաք[30]։

Շահը կարդագրում է թագաժառանգին և նահանգապետ Ամիր Նիզամ Գարուսիին՝ զինել բանակը և ժողովրդական շարժումը ճնշելու համար կտրուկ միջոցների դիմել։

Նահանգապետը, սակայն, առարկում է այդ առաջարկին, պատճառաբանելով որ ժողովրդի մեծամասնությունը դեմ է այդ կոնցեսիային և կարող է միանալ հեղափոխականներին[31]։ Նա մերժում է իրագործել շահի հրամանը և նույնիսկ հրաժարական է տալիս։ Կառավարությունը՝ հատկապես Ամին էս-Սոլթանը, որը Ամին Նիզամ Գարուսիի հետ լավ հարաբերությունների մեջ չէր, վերջինիս մեղադրում է ապստամբների հետ համագործակցելու մեջ և հետ կանչում Թեհրան[32]։

Նման իրադրության մեջ ընկերությունը ստիպված է լինում զիջում կատարել, խոստանալով, որ Ադրբեջանում ընկերության աշխատակիցներ կնշանակվեն միայն ադրբեջանցիներից[33]։ Բայց ժողովուրդը չբավարարվեց դրանով և շարունակեց իր պայքարը։

«Թալբոթ» ընկերության կողոպտիչ գործունեության դեմ Թավրիզի բնակչության ապստամբությունը հանդիսացավ մոնոպոլիս-

---

28 Նույն տեղում, էջ 312։

29 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۷۶

30 مهدی منتظره، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۸

31 Նույն տեղում։

32 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۷۷

33 احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران، ۱۳۴۰، ص ۱۶

տական կապիտալի ներթափանցմանը դիմադրելու ցայտուն մի օրինակ։

Պատմաբան Թեյմուրին գրում է. «...վտանգը դեռ չէր վերացել. Ադրբեջանը նման էր կրակի, որը թաքնվել էր մոխրի տակ»[34]։

Ադրբեջանի բնակչության դժգոհությանը միացան Իսֆահանի բնակիչները։ Նրանք բանադրանքի ենթարկեցին ծխախոտի օգտագործումը և դեկտեմբերի սկզբներին սկսեցին իրենց պայքարը անգլիական գաղութարարների դեմ։ Դեռևս սեպտեմբերի 18-ին պալատը Իսֆահանից ստանում է Զիլ էս-Սոլթանի հեռագիրը, որտեղ հաղորդվում էր Իսֆահանում և Շիրազում տեղի ունեցած խռովությունների մասին[35]։ Չնայած ծխախոտի առևտրի և ժողովրդի կողմից ծխախոտի օգտագործման բոյկոտի ենթարկվելը Իսֆահանի սահմաններից դուրս չեկավ, այնուամենայնիվ, նա խաղաց իր պատմական դերը և ցուցաբերեց ժողովրդի կայունությունը և անգլիական գաղութարարների ստրկացուցիչ տնտեսական քաղաքականությանը դիմադրելու կարողությունը։

Թեյմուրին նկարագրում է հետևյալ դեպքը. երբ մի անվանի վաճառական հրաժարվում է իր բերքը վաճառել անգլիական ընկերությանը, կոնցեսիայի գործակալները որոշում են կալանքի տակ վերցնել նրա ծխախոտի ողջ պաշարը։ Վաճառականը մեկ օր ժամանակ է պահանջում և գիշերը այրում իր 12 հազար քսակ ծխախոտը[36]։

Առևտրականների նման վարմունքը և ընդհանրապես ժողովրդի համընդհանուր ելույթներն ու ցույցերը, չնայած պասսիվ պայքարի բնույթ էին կրում, բայց և այնպես պարսից ժողովրդի զարթոնքի գործում կազմեցին մի փուլ, որը ֆեոդալական միապետության, ինչպես նաև իմպերիալիստական գաղութարարների դեմ ժողովրդի մղած հետագա պայքարում խաղաց իր քաղաքական և տնտեսական դրական դերը։

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ժողովրդական մասսաների ծավալած շարժումն ընդգրկում է նաև Իրանի այլ քաղաքները՝ Ղազվին, Քաշան, Յազդ և Մեշհեդ։

* * *

«Ռեժի» ընկերությունը իր հրամաններից մեկում հայտարարել էր, որ 1891 թ. դեկտեմբերի 3-ից Իրանի ծխախոտի առևտուրը ամբողջովին անցնելու է ընկերության ձեռքը։

---

34 ابراهیم تیموری. قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۷۷

35 Feuvrier, Trois. նույն աշխ. էջ 313—314.

36 նույն տեղում։

Թեհրանի ամբողջ վաճառականությունը, պատկերացնելով տվյալ քայլի հետևանքները, համախմբվում է մայրաքաղաքի խոշոր առևտրական Հաջի Մոհամմեդ Քազեմի շուրջը և պայքարի միջոցներ որոնում։

Ինչպես Իրանի այլ վայրերում, այստեղ ևս իրանական բուրժուազիան դիմում է հոգևորականության օգնությանը։ Հայտնի է, որ դեռ մինչև Իրանի սահմանադրական հեղափոխությունը, երկրի ազգային բուրժուազիան հոգևորական դասին շարժման մեջ ներգրավելու խնդրին մեծ նշանակություն էր տալիս։ Այդ կապակցությամբ Մալքոմ խանը իր «Կանուն» թերթում գրում է. «Մենք ցանկանում ենք հոգևորականների հեղինակությունն ու իմաստությունը օրենքի դրոշ և ժողովրդի միասնության առաջնորդ դարձնել»[37]։

Ազգային բուրժուազիայի հուսալի դաշնակից կարող էր դառնալ հոգևորականության հատկապես այն մասը, որը տուժում էր ֆեոդալական մոնոպոլիստներից և ընդհանրապես դեմ էր, այսպես կոչված, «անհավատների» ներթափանցմանը, որը հետագայում անպայման պետք է ազդեր նրա հեղինակության վրա։

Որքան մոտենում էր անգլիացիների սահմանած ժամկետը, այնքան ուժեղանում էր ժողովրդի դժգոհությունն ու զայրույթը։ Մզկիթներում, վաճառատներում և այլուր հավաքույթներ էին գումարվում, դատապարտվում և քննադատվում էր շահի և պալատականների հայրենադավ քաղաքականությունը։

Մայրաքաղաքի բնակչությունը իրազեկ դառնալով երկրի տարբեր վայրերում կատարվող իրադարձություններին, ավելի է բորբոքվում։ Ամին էս-Սոլթանին ամենուր սպառնում էին և այդ գործարքների միջնորդ էին անվանում։ Նասր-էդ-Դին շահը ցույցերը կանխելու նպատակով Թեհրանի քաղաքագլուխ, փոխարքա Քամբան Միրզային կարգադրում է ձերբակալել ապստամբության առաջնորդներին[38]։ «Շահի դեմ դավադրություն է պատրաստվում։ Բսրիների հնացած ուսմունքի էությունը ենթակա է պայթման»[39],— գրում է Ֆևրիյեն։

Շարժումը օրեցօր ավելի մեծ ծավալ էր ստանում։ Իրանի բոլոր ծայրամասերից բողոքի նամակներ էին ուղարկվում Սամարայի մոջթեհիդ Հաջի Միրզա Հասան Շիրազիին, որոնցում պահանջվում էր բեկանել այդ մենաշնորհը։ Այդ անելանելի վիճակից

---

37 روزنامه „قانون" نمره ۳

38 Նույն տեղում, էջ 85։

39 *Feuvrier*, Trois ans... (1891 թ. հոկտեմբերի 30-ի հաղորդում, էջ 316)։

դուրս գալու նպատակով Միրզա Շիրազին մի հեռագիր է ուղարկում շահին, որով պարզաբանում է այդ կոնցեսիայի հակասումը ղուրանին և, ընդհանրապես, իսլամի ոգուն։ Շահը և պալատականները այդ հեռագրի բովանդակությունը ժողովրդից գաղտնի պահելով, կարգադրում են Բաղդադում Իրանի հյուպատոս Մոշիր օլ-Վոզարեին անմիջապես մեկնել Սամարա և Միրզա Շիրազիին հասկացնել այդ կոնցեսիայի առավելությունը։ Սակայն այդ հանդիպումը նույնպես դրական արդյունք չի տալիս։ Իրանի իշխանությունները նախազգուշական միջոցների են դիմում։ Կարգադրում են ցանցապատել պալատի բոլոր դռները, Դուշան Թափեում կազմակերպում են տեղական կայազորի շքերթ, որին ներկա էր շահը[40]։

1891 թ. նոյեմբերի վերջերին անգլիական ընկերությունը դարձյալ հայտարարում է, որ որոշակի ժամկետից հետո Իրանի ծխախոտի ամբողջ առևտուրը ինչպես երկրի ներսում, նույնպես և դրսում վերապահվելու է ընկերությանը և այդ հրամանը խախտողի բերքը կբռնագրավվի ընկերության օգտին, իսկ տվյալ անձը կենթարկվի պատժի[41]։

Դրան անմիջապես հաջորդում է շքեղ տոնակատարություն, որը ավելի է բորբոքում Թեհրանի բնակչության զայրույթը։

Վերջապես, 1891 թ. դեկտեմբերի 3-ին Սամարայից ստացվում է շիաների մոջթեհիդ Հաջի Միրզա Հասան Շիրազիի նամակը, որով ժողովրդից պահանջվում էր բոյկոտի ենթարկել ծխախոտի օգտագործումը մինչև որ կոնցեսիան բեկանվի։

Կոզակների զորախմբի հրամանատար Կոսոգովսկին, որի տեղեկությունները մեր կարծիքով ավելի հավաստի են, նշված դեպքերից մի քանի տարի անց, այսպես է նկարագրում այդ իրադարձությունները. «Թեհրանի և Ադրբեջանի վաճառականների ղեկավարը ադրբեջանցի էր։ Նա ճանաչված անձնավորություն էր»։

Քաջատեղյակ լինելով անգլիացիների հետագա ծրագրերին, որոնց համաձայն նրանք մտադիր էին ծխախոտի մենաշնորհից հետո ամբողջ Իրանը վերցնել իրենց ձեռքը, նա մի նամակ է գրում Հաջի Միրզա Հասան Շիրազիին, որն ապրում էր Նաջաֆում (Քարբալային մոտ)։ Վերջինս ստանալով այդ նամակը, ծխախոտի օգտագործումը բանադրանքի ենթարկելու նպատակով մի ֆաթվա* է

---

40 *Feuvrier*, Trois ans *(1891 թ. հոկտեմբերի 31-ի նշումներ, էջ՝ 316—317)*։

41 ابراهيم تيموري، قرارداد ۱۸۹۰، تهران، ص ۱۰۰

* Ֆաթվա—կրոնական դատավճիռ։

արձակում, որով աշխարհի բոլոր շիաներին արգելում է ծխախոտի օգտագործումը[42]։

Ըստ Մալեքզադեի տված տեղեկությունների, Իրանի տարբեր քաղաքներում ժողովուրդը հավաքում է բոլոր նարգիլաները և հրապարակներում հրդեհում, իսկ Թեհրանից ստացված սպառնալի հեռագրերին ուշադրություն չի դարձնում[43]։

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ծավալված մեծ շարժումը անդրադառնում է անգլիական շահնշահի բանկի ակցիաների վրա, որոնց արժեքը կիսով չափ ընկնում է[44]։ Լոնդոնի բորսայում ծխախոտի ընկերության բաժնետերերի ակցիաների գինը նույնպես ընկնում է 50 տոկոսով[45]։

Առևտրականների պարագլխի արտաքսումը ավելի է բորբոքում ժողովրդի զայրույթը և կառավարությունը ստիպված է լինում մի քանի օրից հետո նրան վերադարձնել Թեհրան։

Աքսորից վերադարձող ավադին ժողովուրդը արժանավայել կերպով է դիմավորում[46]։

Ամին էս-Սոլթանը և ծխախոտի ընկերությունը որոշում էն հոգևորական դասին կաշառելով բիկանել տալ մեծ մոջթեհիդի հրամանը։ Այդ նպատակով նրանք փոխարքայի տանը հանդիպում են կազմակերպում հոգևոր ղեկավարների հետ, որոնց միայն մի մասն է ընդունում այդ հրավերը։ Հանդիպումն ապարդյուն է անցնում[47]։

Լարվածությունը մեղմացնելու համար Իրանի իշխող շրջանները բանակցություններ են վարում անգլիական դեսպանատան և կոնցեսիոների հետ, որպեսզի ընկերությունը հրաժարվի Իրանի ներսում ծխախոտի մենաշնորհի իրավունքից, իրեն վերապահելով միայն արտահանման և ներմուծման իրավունքը։ Ընկերությունը տալիս է իր համաձայնությունը, սակայն ժողովուրդը մերժում է նաև այդ որոշումը։

Իրադարձությունները գնալով սրվում են։ Պատերին փակցվում են թռուցիկներ, որոնցում զգուշացվում էր, որ եթե 48 ժամվա

---

[42] «Из Тегеранского дневника полковника Косоговского», М., 1960, стр. 141—142.

[43] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۹

[44] *М. С. Иванов*, Очерки истории Ирана, М., 1952, стр. 196.

[45] *М. Павлович* и *С. Иранский*, Персия в борьбе за независимость, М., 1925, стр. 105.

[46] ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۱۰۵

[47] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۹

ընթացքում ծխախոտի կոնցեսիան չբեկանվի, օտարերկրացիների կյանքը վտանգի տակ կդրվի[48] և 1892 թ. հունվարի 4-ին հեղափոխություն կսկսվի[49]։

Օտարերկրացիները խումբ-խումբ փախչում էին Թեհրանից, իսկ ոմանք էլ թաքնվում իրենց պարսիկ բարեկամների կամ ծանոթների տներում[50]։

Ստեղծված իրադրությունից ահաբեկված իրանական իշխանությունները ստիպված նահանջում են և 1891 թ. դեկտեմբերի 28-ին հայտարարվում է կոնցեսիայի բեկանումը։

1892 թ. հունվարի 1-ին Սամարայի մոջթեհիդ Հաջի Միրզա Հասան Շիրազին հեռագրով շնորհավորում և շնորհակալություն է հայտնում շահին՝ ծխախոտի կոնցեսիան բեկանելու համար։

Այնուհետև շահը պահանջում է, որպեսզի Իրանի մոջթեհիդների առաջնորդ Միրզա Աշթիանին մի հրաման (ֆեթվա) արձակի, որով օրինական համարվի ծխախոտի օգտագործումը, հակառակ դեպքում նա կհեռացվի Թեհրանից։ Մոջթեհիդների առաջնորդը հրաժարվում է այդպիսի հրաման արձակելուց, չունենալով Սամարայի մոջթեհիդ Միրզա Շիրազիի թույլտվությունը և պատրաստվում է հեռանալ Թեհրանից։

Այդ առիթ է դառնում, որպեսզի Թեհրանի ամբողջ բնակչությունը 1892 թ. հունվարի 4-ին նորից ոտքի կանգնի։

Փակվում են քաղաքի բոլոր շուկաները և խանութները, իսկ բնակիչները մահակներով զինված հավաքվում են Աշթիանիի տանը, որտեղից և շարժվում են դեպի շահի պալատը, ապա շրջապատում այն[51]։

Փոխարքա Քամրան Միրզային հետևյալ բովանդակությամբ մի ձեռագիր հրաման է արձակում.

«Ներքին կոնցեսիան վերացրել էինք, այժմ վերացնում ենք նաև արտաքին կոնցեսիան։ Ժողովուրդը կարող է նարգիլա չծխել, մինչև Միրզա Շիրազիի կարգադրությունն ստանալը։ Շահ»[52]։

Հրամանն անմիջապես ուղարկվում է Միրզա Աշթիանին, որպեսզի վերջինս հրապարակի ժողովրդի մեջ և խաղաղություն քարոզի։

---

48 Feuvrier... (1891 թ. դեկտեմբերի 26-ի նշումներ, էջ 325)։

49 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۳۲

50 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۱۴۴

51 Տե՛ս՝ ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۱۵۲

52 Նույն տեղում, էջ 156։

Իրանի հոգևոր առաջնորդ Միրզա Աշթիանին, ինչպես նաև վաճառականների պարագլուխ Հաջի Մահմամադ Քազեմը, ծխախոտի կոնցեսիայի լրիվ բեկանման վերաբերյալ շահի ձեռագիր հրամանը ստանալով, բավարարվում են դրանով։ Խուսափելով այդ շարժման հետևանքներից, ինչպես նաև ելնելով իրենց դասակարգային և անձնական շահերից, երկրի կարգերի վերափոխման համար ստեղծված այդպիսի նպաստավոր պահին, երբ ժողովուրդը առաջնորդի կարիք էր զգում, իրենց նախկին դիրքերից ետ են նահանջում և սկսում են գործել ի վնաս նրա շահերի։ Նրանք բազմացնում են շահի ձեռագիր հրամանը և բաժանում ժողովրդին, ասելով. «...ցրվեք և գնացեք ձեր գործին»[53]։

Սակայն զայրույթի գագաթնակետին հասած ժողովուրդը ուշադրություն չդարձնելով այդ քարոզներին, համախմբվում է իր շարքերից դուրս եկած հերոսների՝ մսավաճառ Մեհդիի, մեյդանի Հաջի Մասումի և մյուսների շուրջը[54], ներխուժում է պալատ և սարսափի մատնում վոխարքային, շահին ու պալատականներին[55]։

Վաքիլ օլ-Դովլեի կարգադրությամբ զինվորները կրակ են բաց անում ժողովրդի վրա, որի հետևանքով վաթսուն դիակ, վիրավորներին չհաշված, ծածկում են սահմանակից փողոցը[56]։

Մի քանի օր շարունակ թնդանոթները տեղադրված էին պալատի շուրջը, տողաններով կանգնած էին զինվորները, հնձյալները շրջում էին քաղաքում և ցրում ժողովրդի խմբերը[57]։

Եգեռի աշխատությունն ուսումնասիրելիս Վ. Ի. Լենինի ուշադրությունը գրավում է նաև շահի պալատի վրա ժողովրդի հարձակման և նրա տված զոհերի փաստը։ Վ. Ի. Լենինը «Մի քանի հարյուր զոհեր» նոխադասության դիմաց, երկու բացականչական նշան է դրել[58]։

Ծխախոտի կոնցեսիայի դեմ համաժողովրդական շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շարժումը սկսվել է մինչ Սամարայի Միրզա Շիրազիի հրամանի հրապարակումը, իսկ պալատի վրա ժողովրդի հարձակումը տեղի է ունեցել շահի կողմից ծխախոտի պայմանագիրը բեկանելուց վեց օր հետո, այսինքն՝

---

53 Նույն տեղում, էջ 156, 165—166։

54 Նույն տեղում, էջ 158.

55 Տե՛ս مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۳۰

56 Նույն տեղում, նաև՝ ابراهیم تیموری، قرا رداد ۱۸۹۰ رزی، ص ۱۶۳

57 Նույն տեղում, էջ 169։

58 Տե՛ս В. И. Ленин, Тетради по империализму, стр. 659.

շարժումը ոչ Միրզա Շիրազիի Ֆեթվայով է սկսվել և ոչ էլ ավարտվել է շահի կողմից ծխախոտի կոնցեսիայի բեկանման հրամանով։ Սակայն այդպիսի մեծ ծավալ ստացած շարժումը ճնշվեց բռնապետական իշխանության զենքի ուժով, որովհետև հմուտ, կոփված առաջնորդներ չունենալով այն կրում էր անկազմակերպ պայքարի բնույթ։

Ուշագրավ է հայրենասեր մարտնչողների հայտարարություններից մեկը, որը փակցվել էր պալատի պատերին՝ կոնցեսիայի բեկանումից հետո։ Նրա մեջ մասնավորապես ասված էր. «Է՛յ, Նասեր-էդ-Դին շահ... այժմ, երբ պետության և իշխանության անմարդկային էությունը պարզ դարձավ ժողովրդին, նա համոզվեց, որ այսուհետև, ինչպիսի տառապանքի, դժբախտության և փոթորկումների մեջ էլ գտնվի, երբևիցե արդարադատության համար չի կարող դիմել կառավարությանը։ Ելնելով դրանից, պայքարի համար նախապատրաստվել և զինվել ենք և ունենք այնպիսի հզորություն, որ կարող ենք հակահարված հասցնել քո հրացաններին և թնդանոթներին...»[59]։

Կոնցեսիայի բեկանման հետ միասին Իրանի իշխող շրջանները բանակցություններ սկսեցին պայմանագրի փոխհատուցման մասին։

Ֆեվրիեն նշում է, որ փոխհատուցման համար ընկերության ներկայացրած սկզբնական պահանջը շատ բարձր էր՝ 12,500,000 թուման կամ մոտավորապես, 125,000,000 ֆրանկ[60]։

Վերջապես, ավելի քան երեք ամիս տևած բանակցություններից հետո, 1892 թ. ապրիլի 5-ին փոխհատուցման համար սահմանվում է 500,000 ստեռլինգ։ Դրա դիմաց կոնցեսիոները պարտավորվում էր հրաժարվել կոնցեսիայի իրավունքներից և այն բոլոր շենքերը, որոնք կառուցել էր Իրանում, ինչպես նաև այն ամբողջ ծխախոտը, որ գնել էր, վերադարձնել տիրոջը։

1892 թ. մայիսի 15-ին իրանական պետության և «Շահնշահի բանկի» միջև մի պայմանագիր է կնքվում, որի համաձայն վերջինս պետությանը պարտք է տալիս 500.000 ստեռլինգ, վեց տոկոսով և քառասուն տարի ժամկետով։

Համաձայն պայմանագրի 5-րդ կետի, այդ գումարի և տոկոսների դիմաց Իրանի կառավարությունը անգլիական բանկին որպես երաշխիք, քառասուն տարի ժամկետով տալիս էր «Պարսից ծոցի

---

59 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰، تهران، ص ۱۸۲—۱۸۳

60 *Feuvrier*, Trois ans... Նշվ. աշխ. էջ 326,

Բուշեր, Բանդար Աբբաս, Լանգե նավահանգիստների, ինչպես նաև Շիրազ քաղաքի մաքսային եկամուտները»"։

«Տեղին է ասել,—գրել է Սայիդ Մոհամադ Ջամալ զադեն,—որ հենց այս պարտքերը դարձան Իրանի ստրկացման շղթան և մեր մեծ և հին ժողովրդին դատապարտեցին ադահ և անխիղճ օտարների կամայականություններին»[62]։

Այդ առթիվ «Կանուն» թերթը այսպես է հայտնում իր կարծիքը՝ «որ ծխախոտի կոնցեսիան հանդիսանում է մեր էական իրավունքներից մեկը։ Ենթադրենք այդ կոնցեսիան լուծարքի ենթարկվեց, բայց արդյոք դրա փոխարեն նրանք ամենաէժան գնով իրենց պարտնյորներին չե՞ն վաճառի մեր ուրիշ բազմաթիվ իրավունքները»[63]։

Անգլիական գաղութարարները չեն կասեցնում իրենց ջանքերը։

Կոնցեսիայի պայմանագրի բեկանումից և ընկերության լուծարքի ենթարկվելուց շատ չանցած Իրանի հարավային մաքսատներից մեկում «Ռեժի» ընկերության մակնիշով մի քանի արկղ է ստացվում, որոնց ստուգումից պարզվում է, որ նրանք լցված են հրացաններով և այլ ռազմամթերքով[64]։

Ծխախոտի կոնցեսիան և նրա դեմ ծավալված ժողովրդական շարժումը լայնորեն քննարկվել է պատմագրության մեջ։

Մեհդի Մալեքզադեն «Իրանի սահմանադրական հեղափոխության պատմությունը» բարձրարժեք աշխատության մեջ գրում է, որ ծխախոտի կոնցեսիայի դեմ հեղափոխության հաղթանակը պատճառ դարձավ, որպեսզի ժողովուրդը համարձակություն և խիզախություն ձեռք բերի և գիտակցի, որ կարելի է շահի և պետության կամքին հակադրվել և համաժողովրդական շարժումով պաշտպանել իր շահերը, իսկ ամենակարող շահին, որը ժողովրդի ճակատագրի որոշողն է պարտադրել անձնատուր լինել։ Եվ այն ուժը, որ ձեռք բերվեց այդ իրադարձություններից հետո, օժանդակեց սահմանադրական հեղափոխության առաջընթացին և ազգային պետության ստեղծման գործին[65]։

---

61 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰، ص. ۲۰۹، ۲۱۲

62 محمدعلی جمال‌زاده، گنج شایگان یا اوضاع اقتصادی ایران، برلن، ۱۳۳۵، ص. ۱۰۹

63 روزنامه «قانون» نمره ۱۷

64 Տե՛ս ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰، ص. ۲۲۰—۲۲۱

65 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۶—۱۲۷

Աբբաս էղբալը հիշյալ շարժումը հետևյալ կերպ է բնութագրում։ Ժողովրդական ապստամբության հաղթանակը և ծխախոտի կոնցեսիայի չեղյալ համարելը, ժողովրդին համոզեց, որ դիմադրությամբ, ապստամբության և հաստատակամություն ցուցաբերելով կարելի է կանխել բռնակալության պետական ապարատի այն կամայականությունները և ձեռնարկումները, որոնք ուղղված են նրա դեմ[66]։

Հասան Հալաջը գրում է.—Ժողովուրդը ապստամբեց Նասեր-էդ-Դին շահի գործարքների դեմ, այսպիսով, առաջին շարժումը կամ համաժողովրդական ապստամբությունը ընդդեմ Ղաջարների դինաստիայի, կրում էր քաղաքական բնույթ[67]։

Այս տեսակետին համամիտ է նաև պատմաբան Աբդոլահ Ռազին, որը գրում է. «...Նասեր էդ-Դին շահի օրոք մի իրադարձություն (ծխախոտի կոնցեսիան—Հ. Փ.) տեղի ունեցավ, որտեղ առաջին անգամ Իրանի ժողովուրդը իր կամքը թելադրեց Ղաջարների թագավորին և արգելք հանդիսացավ նրա ցանկությունների իրագործմանը...»[68]։

Մեր կարծիքով, այդ ապստամբության վերաբերյալ ամենաճիշտ մարքսիստական գնահատականը տվել է Վ. Տրիան։ Նա նշում է, որ Իրանում ազատագրական շարժման առաջին ձևը եղել է տընտեսական բոյկոտը՝ պայքարի մի ձև, որ հետագայում նույնպիսի հաջողությամբ կիրառվեց Թուրքիայում, Չինաստանում և Հնդկաստանում։

Այսպիսով, 1891 թ. ժողովրդական ապստամբությունը ընդդեմ ծխախոտի կոնցեսիայի ավարտվեց իրանցիների հաղթությամբ։ Դա երկրի պատմության մեջ կարևորագույն փուլ է և իրավամբ հանդիսանում է սահմանադրական հեղափոխության սկիզբը[69]։

Հեղինակը գրում է, որ այդ պայքարն ընթացավ Իրանի ողջ ժողովրդի ապշեցուցիչ տոկունությամբ և միաբանությամբ։ Այդ իրադարձությունը Իրանի լիբերալ բուրժուազիայի և շահի բռնապետական իշխանության միջև տեղի ունեցած առաջին երկարատև պայքարն էր[70]։

---

66 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۳

67 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران، ۱۳۷۷ قمری، ص ۲۴

68 عبدالله رازی، تاریخ مفصل ایران از تاسیس ماد تا عصر حاضر، تهران، ۱۳۳۵، ص ۵۰۳

69 ادوارد براون، تاریخ مطبوعات و ادبیات ایران، تهران، ۱۹۵۸، ص۲۵—۲۶

70 *В. Триа,* Кавказские социал-демократы в персидской революции, Париж, 1910, стр. 104—105.

Անգլիացի գաղութարար Քերզոնը գրում է. «Զարմանալու կարիք չկա։ Սի երկիր, որը օտարերկրյա տարրերի ընդունման հարցում այդ աստիճան տարված է իսլամական սնոտիապաշտությամբ ու մոլեռանդությամբ, տեղի կտա մոլեռանդական ցույցերի»[71]։ Այսպիսով, Քերզոնը այդ համաժողովրդական բոյկոտը համարում է հոգևորականության հակազդեցության հետևանք։

Սակայն, ինչպես տեսանք, այդ շարժումը տեղի էր ունեցել մինչ Սամարայի մոջթեհիդի արձակած կրոնական դատավճիռը և շարունակվել էր շահի կողմից ծխախոտի կոնցեսիան բեկանելուց հետո։

Շարժումը քիչ այլ ձևով է բացատրում Փիթր Էյվրին։ Նա պատմում է, որ հոգևորականների շարքերում տեղի ունեցավ մի համախմբում և մեծ վեզիր Ամին էս-Սոլթանի բոլոր ջանքերը՝ տահպանել կապը հոգևորականների հետ, ապարդյուն անցան։ Խորացավ այն վիհը, որը նրանց բաժանում էր գահից[72]։

Իսկ անգլիացի արևելագետ Բրաունը իր բազմաթիվ աշխատություններում բարձր է գնահատել այդ ժողովրդական մեծ շարժման դերը Իրանի ժողովրդի հետագա զարթոնքի գործում։

Օ. Լ. ՊԱԽԼԵՎԱՆՅԱՆ

ДВИЖЕНИЕ В ИРАНЕ ПРОТИВ ТАБАЧНОЙ КОНЦЕССИИ В КОНЦЕ XIX в.

Резюме

В конце XIX в. англичане постепенно захватывают важнейшие экономические и политические позиции Ирана. Им удается через предательские круги властей Ирана приобрести ряд концессий. Одной из многочисленных поработительных концессий являлась табачная концессия, которая в 1890 г. была предоставлена английской компании «Тальбот» на скупку, продажу и переработку табака на всей территории Ирана.

Эта концессия, не нося ограниченного характера, отличалась от других тем, что непосредственно отражалась на экономической и политической жизни всего населения Ирана. В результате этой концессии в Иран вторглись англичане,

---

[71] *G. N. Curzon*, Persia and the Persian Question, Vol. II, London, 1892, p. 628.

[72] *P. Avery*, Modern Iran, London, 1965, p. 95.

и во все окраины страны были посланы английские надзиратели.

С целью дать отпор этим захватническим вторжениям английских колонизаторов иранские патриоты слились с народными массами и создали антиколониальный, антифеодальный сильный фронт. Защищая экономические и политические интересы народа, этот фронт последовательно боролся против продажных феодальных властей и их покровителей-колонизаторов, в результате чего поработительная концессия была расторгнута. Это всенародное движение в период царствования Насер эд-Дин шаха после бабидского движения является наиболее известным; в его процессе иранский народ пережил период своего пробуждения и осознал силу сплоченности. Это движение действительно нужно считать репетицией последующей конституционной буржуазной революции в Иране 1905—1911 гг.

Следовательно, это восстание в истории иранского революционного движения имеет свое достойное место.